

ԱՅՐԻՅՎԱՆՔ

Կ Ա Մ

ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆՔ

(Շարունակներէն)

Դրսի ժամատուն կամ գաւթ աւելի ընդարձակագոյն է՝ միաստանի հսկայաձև և թանձր վերնախարսխօք զարդարուած և շորս սիւներու վերայ կառուցուած. որոց վերայ բարձրացած է քառակուսի կաթուղիկէ, յորում միայն է մի մեծ լուսամուտ՝ շուրջանակի խորշխորշեայ փորուածներով քանդակագործուած: Կեանց վերայ ութն կամար ձգուած է, որք կը տրոհեն ութն կամարաբաժիններու:

Ի տաճարն մասնելոյ դրան սատի և անտի կանգնած են երկու մեծամեծ խաչքարեր ընդ որմն ի վեր՝ պատուանդաններով խարսխուած, որոց միոյն՝ հարաւայնոյն երկայնութիւնը տասն թղաչափ, ու լայնութիւնը հինգ ու կէս, և ի գագաթն՝ Փրկչական մի քանի պատկերներ կը նշմարուին հազիւ հազ, և ներքեւը արձանագրուած է՝ Ո Ա Ի. թ. Աստուած որդրմի ես Տիմոթին և Միսիթարայ յաւրինոզն խաչես,:

Իսկ հիւսիսային խաչքարի վերայ փորագրուած է՝ Վ. Վ. Վ. Այս խաչքարից խիստ ճարտար արուեստագործ քանդակութիւնը կը մայլեցնէ զտեսողս. սոյնպէս և համօրէն եկեղեցին զրեթէ քանդակագործուած է խիստ ու հոծ զրուագներով ու արձանագրութեամբք, և թէպէտ մանրամասն նկատելով՝ զուգապատշաճ և հաւասար միմեանց չ'երևին, բայց և այնպէս՝ ճարտարապետութեան գեղա-

նի օրինակ կը հանդիսանայ աստ: Ոոյն գաւթէս ի տաճարն մասնելոյ դրան երկու կողմանց՝ այս է՝ արեւելեան անկեանց մէջ կան կրկնայարկ մատուաներ, որոց հարաւային վերնայարկ մատուան դրան վերայ փորագրուած է,

“ . . . իէ

„ ի յանուն յիշատակ սուրբ(Թ)աթէոս
 „ առաք . . . Լ խորանիս (,) յիշատակ
 „ Ախրակոսի հաւր Գաւթի և վ .
 „ իւր, , :

Այլեղեցւոյս շինութիւնը եղած է 1214 (ՈԱԳ.) Փրկչ. թուին, որոյ յիշատակագրութեան արձան՝ քարահիւս տաճարին արեւմտեան մեծ դրան (ի մէջ գաւթին) շրջանական կամարաձև քարին վերայ՝ նոյն ձևով՝ երկու և կէս տողով փորագրուած է այսպէս:

„ Ի ժամանակս թագաւորադնոյն Օա-
 „ քարիայի և Իւանէի նորին հարազատի
 „ և որդւոց նոցին Շահանշահի և Աւա-
 „ ղին (,) և յառաջնորդութեան Գարսղե
 „ միայնաւորին և աշխատութեամբ եղար-
 „ ցըս շինեցաւ Աթաղիկէս մեծափառ :
 „ ՈԱԳ. , , :

Այլեղեցւոյս հիւսիսային որմն կոկեալ միասպազազ վէմ է՝ առապարին երեսը, որ կրկին անգամ բարձր է քան զեկեղեցին. երկանաքարի նման է վէմը, որոյ մէջ կը տրուած ու փորուած են շորս վիմափոր եկեղեցիք, որոց երեքը որմնակից է եկեղեցւոյն և զրեթէ հաւասար յաասկով. իսկ չորրորդը սոցա վերայ առաւել ընդարձակ և քառակուսի դիրքով է:

Առաջնոյն մուտքը գաւթին արեւելեան հիւսիսային անկեան կից է, և հաւասարապէս ի լայնութիւն և յերկայնութիւն

ութն ոտք է, կամ քառասուն քառակուսի գազ Պարսից: Չեղունը գմբեթաւ որ բարձրացած է, և հարաւային կողմէն բուրջի լուսամուտ ունի: Յատակէն քսան ոտք բարձր է: Բեմը, սեղանը և խոհրդանոցը մի և նոյն վիմէն դործուած է անբաժան: Այս եկեղեցւոյ հիւսիսակողմն միտորչ կայ ութն ոտնաչափ դիրքով, կրկին կամարով զատուած, յորում կան գերեզմաններ և հաշիւ հազ կը նշմարուին երբեմն արձանազրութիւնք գանուիր: Աղեւց հիւսիսային դասէն կենէ սեօրակ և անախորժ ջուր, որ եկեղեցւոյս և դաւթին յատակին ներքեւէն կանցնի և ի գետակ կը թափի:

Հիւսիսային որմին վերայ՝ կամարաց ներքեւ՝ քանդակեալ փորուած է վեթխարի գլուխ եղին՝ ունելով մանեակ ի բերան, յորմէ արձակուած շղթաներով կուպուած կան երկու առիւծ դէմ առ դէմ, և մի արծիւ թևատարած կը սոււառնի սոցա վերայ՝ որ մնողովք ու կտցով մի գառն բռնած ունի: Այս սրակերի գուշակութեան վերայ մի ծանօթութիւն գտանել դժուար է: Օայս եկեղեցիս փորել տուած է Պռոշ իշխանը, որոյ յիշատակագրութիւնն ինչպէս և շինութեան եկեղեցւոյս՝ հարաւային որմին վերայ՝ ութն և կէս տողով պարզ փորագրուած է:

Ի Տէրութեան բարեպաշտ Աստուածաս, սերթագաւորին Արաց Աւագին և Շահնշահի և որդոց նորա Օաքարիայի ես Պրոշ որդիս Ասակայ, յազդէն խաղբակայ, գանձագին արարի ի տէրանց աշխարհիս, զվեճահոյսին Այրիվանս լերամբ և դաշտաւ և ամենայն կալուութեամբ որ կայր ի սմա (.) փորեցի ի վիմէ տուն Աստուծոյ յիշատակ ինձ և որդեաց իմոց և ո

մուսին իմ խութլու խաթունին (.) ի մոլ
 , , րն զաւէն րդի ի րոտն սորբ Գեղար
 , , րին վախճ *) : , ,

Այս տաճարի կից արեւելեան կողմն միմեանց մըջ փորուած մի և նոյն վիմէ՝ գեղեցիկ երկու եկեղեցի կայ, ներքինն խաչաձև և վերոյիշեալ եկեղեցւոյ նման՝ բեմերն՝ աստիճաններն՝ սեղաններն և խորհրդանոցներն բոլորովին մի և նոյն միապաղաղ վիմէն քանդակագործուած են: Աոցա դռները քարաշէն գաւթին հիւսիսային կողմեն հանդէպ արև. հիւս. սեան: Աոցա մէջ չըկայ ոչինչ արձանագրութիւն կամ յիշատակարան, ուստի և չէ յայտ՝ յորոց շինեալ են և թէ երբ: Արծիւք կայ՝ զի այս երկու եկեղեցիները ի հնուց շինուած լինին, և սոցա անուամբ մենաստանս կոչուած լինի Այրիվանս: Ի՞նչ և առաւել հնագոյն վիմավոր մատուռ կը նշմարուի վանուցս մէջ, բայց զայսպիսիս աւելի ճշգրտարան կարծել հաւանական պէտք է լինի:

Չորրորդ վիմավոր եկեղեցին՝ որ քան զերիս եկեղեցիս մեծ և զրեթէ նոցա տանեաց վերայ է, որոյ դուռը քարաշէն եկեղեցւոյ դուրը՝ մեծ վիմին արևմտեան հարաւոյ անկիւնն է, յորմէ հինգ քայլի չափ յատաջանալով կը մտանուի յեկեղեցին: Փորուածքը չորս սիւներու վերայ ներքնախարսխներով և վերնախարսխներով կամարաղարդ և բոլորովին մի և նոյն վիմէ է: Չեղունը սրածայր գմբեթաւ որ փորուած է, և մի լուսամուտ ունի: Գիրքը քառակուսի է, բայց սեղան, բեմ և այլ

(*) Նստրով նշանակածներս այլ տեսակ գրով և գուցէ ետքէն գրված է:

Հարկաւոր տեղեր շունի, և զրեթէ գեախն ը հաւասար է:

Մ.յս եկեղեցին փորել տուած է Պոռոշ իշխանի որդի Պատպակ ինքեան և ամուսնոն ի յիշատակ. որոյ արձանագրութիւնը հիւս. արեւ. սեան վերնախարսխէն սկըսեալ կրբութեանը վոյ ուած է այսօրինակ:

«Մ.ւղինսրանութեամբն Աստուծոյ ևս «Պատպարս որդի Պոռաշոյ և ամուսին իմ «Մ.սուղուքան փորեցաք զժամատունս «յյնքնսրուն*» վիմէ յիշատակ հոգոց մե. «յոց և զաւակ մեզ անմահ ի հալալ «արդեանց մլրցոյ (.) և ելի առաջնորդու. «թեամբ Տէր Մարգարի**» թիվ. 21, 12 (1288)»:

Մոյն եկեղեցւոյ հարաւ. արեւել. սեան վերայ հնագոյն ձեւերով և փակադրովք փորեալ է հետեւեալ ոտանուոր արձանա. զրութիւնը առանց թուականի:

- «Սուրբ նշան Տէրունական (.)
- «Միմաւոն Աղին (զուցէ կարգապէ. «տէն) լիւր պահապան
- «Հողոյ նորա պատասպարան
- «Եւ անցանայն քաւարան (.)
- «Որ ետ պարզեա անանցական
- «Եւ ի՛ր յոյս սուրբ Պ.եղչան (Պ.՛. «չարդամ)
- «ՂԱմաւուրքս հրոշաղան
- «Օարդարեալ բանիւ Աստուածա. կան
- «Ի՛ք յիշատակ անջնջական
- «Եւ թիս (զուցէ Բաշէխոս) միշտ յա. «ւիական (.)

(*) Ի Ստորագ. երից. դաւ. Մ.արաշոյ. Շախս ձեւովոր գրուած է:

(**) Անգ. Գրեթէ-բէ:

- «Պայծառութիւն տ. շնից լրման (.)
- «Բոշոր ամաց հանդիսարան (.)
- «Օ.որ ստացու բազում բաղձամար
- «Ի զուարճութիւն նորոյ մանկանց
Բէթուլ Գանն է. . . :

Ա.երոզրեալ վիմափոր եկեղեցւոյ վե. «ր ոյ ի հարաւակոյմն՝ մի և նոյն վիմին մեջ փորուած մատուռներ կան, թէ առան. «ձինն և թէ միմեանց մեջ, որոց ոմաց մեջ սեղաններ կան պատարագելոյ աղա. «դաւ, և նոյս միոյն ունեցած արձանագրու. «թեանն հազիւ կորոշացայ քաղել հետե. «կալ թուական և անունը, որ է «Ի թը. «վիս 21մ: Պ.բիգոր. . . : Ամանապէս արե. «ւելեան կողմը՝ ե ձորն իջանելու դրան հանդէպ՝ մեկնոյն վիմէն փորուած մի. «մեանց մեջ մատուռնք կան, որոց միոյն մեջ ի վերայ պատին փորեալ է «սուրբ Պ.բիգոր Հայոցս. . . ներքին հիւս. կողմի մատուան դրան վերայ գրուած է «Ի թը. «վիս . . . Պ. . . մեջ սեղի մատուան հիւս. պատին վերայ՝ սեղանին կից՝ «Ամենա. «սուրբ Երբորդութիւնս, քանդակուած է:

Ա.անուցս արեւմտեան կողմը՝ արաս. «քուսա՝ պարսպին կից՝ մենաատանին վե. «րայ բաշ սցած սեպացեալ մեծ վիմին գրկին մեջ՝ նոյն վիմէն անբաժան հիմն ունենա. «ով՝ մի այլ ըլլածէ վիմակտոր կայ, որ կրկին յարկերով բոշորովն փորուած է, միայն երեան քարս հիւս զարդարեալ է: Մ.յս երկայարկ փորուածք կրկին բաժանուած է մատուռներու, և ունին վիմքարեր, սուրբ խորհրդոյ սեղաններ և խորհրդանոցներ՝ առանձնութեամբ կրօնաւորաց պատարա. «գելոյ համար: Մ.յս մատուանց իւրաքան. «չիւրոց մեջ հանդերձ պատարագօք հազիւ չորս չորս հոգի կը պարունակուին: Ա.եր.

նայարկ մատուանց հարաւ. արեւելեանին միջ հարաւ. հիւսուածոյ պատին պատուհանին վերայ հեակեալ թուականը կայ.
 «Ի թուիս ՉԱ. նորոզեց սւ սուրբ Աստուածածինս:»

Այսոյնից մատուանց արեւմտեան երեսին տաշուած և հիւսուած քարից վերայ ոչ սակաւ արձանագրութիւնք կան, յորոց թուական ւննցողները կարեոր համարեցի որինակել:

Աոյն երեսին հարաւային եզրերին մօտ, կամ շարժական սանդղովք ելանելու և ներս մտանելու դրան հարաւային կողմը փոքրիկ պատուհանին ներքեով հեակեալք արձանագրուած է կարճ և երկայն տողերով:

« Ի թուիս ՉԱ: Աս Օսքարեան ելի սուրբ Աստուածածնիս, նորոզեցի զԱստուածածինս ի հալալ արդեսանց իմոց և զնեցի զՎեմարիին հոգն Ի դաս կան. և զԿողմաւորէն Մրթորոյն Հաւանայ Ի դաս հեկան (.) և ևսու ընծայք սուրբ Աստուածածնիս, և սպասաւորք խոստայան Բ. ժամ . . . Ա. ինձ Մաքրանայ. սովոք զայս հայրենիքս սյս եկեղեցոյս հասցնի. ՅժԻՎ Հայրապետաց նզովիս . . . »

Աոյն դրան հիւսիսային կողմը:
 « Ի թվ. ՈՒՕ. ևս Սանփաննոս Աուրկեա . . . ց ևսու զիմ հայրենի հոգն զԲասայ Փաւղոց ևսու ի սուրբ ուխտս յաստաջնորդութեան Հաւր Պարիզորոյ: Պաւր ժամ ի տարջն Սանփաննոսի (.) որե խառն'ցաւ ի Մարշոտորոյն մեծաւ աշխատութեամբ: Բաւր ժամ Սարեմարոյ գաւրն (') հաւրն ու գաւր մաւրն, և և Բաւր Սիրիբախտին. . . »

Սորա ներքե չորս տողով:

« Ի թու. ԽԹ: Վրիստոս սակր իշխանաց իշխանքն Օսքար և Իւանէ վերսալին յարձոյց զջուրն Մատուածագրակէ: ԵՂ. և Ուրբաթ ի սուրբ ուխտս (.) զԱւրն որ է սուրբաթ . . . և բնակիչք սորա խոստացան զՄապ խորանն զԱստուածածին բովանդակ տարին պատարազել զՎրիստոս յանուն նոցա. . . »

Աոյնպէս երեք տողով:
 « Աս Աղիզս անեալ ի տան Խութուլ խալիթութեանն և Պասաւոյ Կոստա ի դաս կան (.) և սպասաւորքն խոստացան ի տարին Աւար ժամ. որ խալիանէ Դրոնց յարան է: »

Սմանապէս՝ վեց տողով:
 « Ի թ. ՈՒ: Աս աէր Սանփաննոս Վրդուա . . . Կաթողիկոս եղէ միսթան սուրբ ուխտս Այրից վանաց յաստաջնորդութեան հաւր Պարիզորի (.) և ևսու զԱղիզի աւաքելոց նշխարն և սուրբ Անշան ծննդոց Յոհան. և բնակիչք սեւ յայն խոստացան ինձ զտաւն Քոխման Տրամարն. Պ. . . աւուրան յամենայն եկեղեցիս պատարազել զՎրիստոս . . . »

Աոյն մատուանց ստորայարկ վեմին արուքուստ երեսի վերայ քանդակագործուած տասնէն աւելի խաչեր կան. յորոց եւեք հատին վերայ խիստ մաշուած և դրեթէ շփուարանշմարելի արձանագրութիւնք կային, որոց միոյն հաղեւ թուականը և մի քանի բառերը կարողայայ ընթեռնուել:

« ՈժՎ. թվալ
 « Հա յ ոց
 Սանգնեցաւ սուրբ նշանս ի բարխաւսութիւն

 »

Այլ հարյիշեալ մատուռներէն մի քանի քնյլ դէպ յարեմուտս հեռու վիմափոր մեծ այր կայ, երեսը բոլորովին բաց, որ վտանգաւոր դէպք բռնած է, յորմէ արդէն մի մեծ կտոր փրգած անկեալ է ստորև:

Անն այլ ևս վիմափոր և զետնափոր այրեր *) յորս են մատուռներ, որք երբեմն ասպատակող հրոսակներէն և ազգի ազգի թշնամեաց արիւնարբու ծիրաններէն զերծանելոյ աղաքաւ՝ շրջակայ Հայկազն բռնակչաց և վանականաց և այլոց ապաստանարաններ եղած են, որոց բազումք արդարև անառիկ բերդեր և անմատչելի ամրոցներ կը ձևանան ցարդ:

Ի շրջակայս երբեմն բաւական զիւղեր և բնակիչներ զտնուած են: Այժմ սակաւ

(*) Ի սոցանէ միոյն մէջ՝ որ քառորդ վերստի չափ հեռաւորութեամբ դէպ յարեմուտս՝ ի վառս գնալոյ ճանապարհին ձախակողմը ժայռի ներքև է, մի քանի տարի առաջ մերազնեայ մանկուծք ոմանք խաղացած միջոցին՝ մինն միամտութեաբ նոյն ժայռի ներքև գտնուած փոքրիկ ծակէն ի ներքս կմտանէ, և ահա կտեսնէ մի քանի բաներ. անմիջապէս իմաց կը տայ վանահօր Միքայէլ Ա. ազապետին Չամոյեանց, որ կը փութան անցր, և սակաւ ինչ ևս փորելով կգտաննն մի հատ երկամ վարագորի, որ այժմ դրուած է հիւսուածոյ եկեղեցոյ խորանին վերայ և երկու հատ զանդակ մին՝ որ միւսն զոյզն ինչ մեծ է, հետեւեալ արձանագրութիւն ունի. «Յիշատակ է զանգալս Խօճայ, նուրվերտու որդի Ա. ետիբին — սուրբ Գեղարդայ, Թ. Վ. ՌճԺ. Սորա վերայ կան նաև փորագրուած պատկերներ՝ 1) Խաչկութեան Գրիստոսի, 2) Աստուածածնայ՝ Յիսուս Արդի ի գերկան՝ ոտից վերայ կանգնած, 3) Ս. Գայիանեայ և 4) օրհնելուն Գրիստոսի զմանկուսու. Իսկ միւս զանգակին վերայ գրեալ է, «Յիշատակ է Գետրոնեցի Առաքելի որդի Գրիգորին ի դուռն սուրբ Գեղարդին, Թ. Վ. ՌճԽԵԻՆ»

զիւղօրայքն *) կան, իսկ գտնուածներէն շատերուն մէջ ևս թուրքեր և Պարսիկներ և Վրասեր կը բնակին ինչպէս ի Հայոց — Թառ գիւղն, յԱղջաբերդն և յայլն:

Աստ արժան է յաւելուլ, զի Գեղարդայ շրջակայ երկիրը աւհասարակ բարերեր է, այլ երկրագործութիւնը աւելի մշակուած չէ: Աւարուցանքը ընդհանրապէս ցորեն և դարի է: Մի քանի տեսակ և այն դոյզնագիւտ պաղատու ծառեր կը գտնուին իտեղիս տեղիս: Անները ամայի են գրեթէ:

Բնակչաց բարոյական և մտւորական վիճակները ցաւալի դրութեան մէջ են, և բաւական ժամանակի ու անխոնջ աշխատութեանց կարօտ են զայնս բարւոքելոյ համար:

Այլազգի բնակչոց մեծ մասը աւաղաւարարոյ և ծոյլ են. կը սիրեն աւելի այլոց աշխատութիւնը վոյելել:

(*) Յորոց չորս զիւղօրայքն Գողթ, Մէհրապ, Բուրաքէնտ, և Թէպէ-Պաշ՝ վանքին կալուածքներն են՝ Միքայէլ վարդապետի ջանիք գնուած: Առաջինը թէև նախ բոլորը Պարսիկ բնակիչ ունեցած է, բաց այժմ 12 տունը Հայք են և վերև քարափան վերայ կրնակին, և 8 տուն Պարսիկ են, որք ստորև ձորին մէջ կրնակին: Մի քահանայ կայ, և ժողովուրդը Գեղարդայ մէջ կը կատարէ իւր հոգևոր պարտաւորութիւնքը. երկրորդը՝ 12 տուն Հայ, երրորդը՝ 30 տուն, և չորրորդը 18 տուն Հայ բնակիչք ունին, և ամենուն մի եկեղեցի և մի քահանայ կայ, որ և նոցա մանկանց կարգալ ևս կուսուցաւէ:

